

ժայեց ինձ, որը ես իմ կողմից նուրբում եմ
<Մշակի> խմբագրութեանը: Տաշված քարերի
կոյտի մէջ գտնուում է մի կիսաբլուրակ քար, ու
րի վրա քանդակագործված է խաչ, և որ պէտք
է լինի դրան վերին քարը: Հուռ տալով մի քանի
քարեր, մենք չը կարողացանք գտնել ոչ մի
վրա արձանագրութիւն: Աւերակից ցած մօտ 10
սաժէն հեռավորութեամբ նկատեցինք մենք նոյնպէս
մի կիսաբլուրակ քար, որի ձեւից կարելի է եզ-
րակացնել, որ պատուհանի քար է: Սրա վրա փո-
րագրված է արձանագրութիւնը, որի պատճէնը
ձեզ ուղարկում եմ: Յանկալի կը լինէր շատ և
յուսուով ենք, որ մեր հնագէտները կը բացատրեն
այս փորագրութեան բովանդակութիւնը, տառերի
թիւնը, նշանները: Հանգստանալով սուրբ խա-
չի վրա ճաշից յետոյ, մայօր Տուրքիւն ըրորիս
էլ խնդրեց հիւր իրան մօտ Մեջինկերտ, որ սուրբ
խաչից մօտ 15 վերստ հեռավորութիւն ունի և
որտեղ շատ ուրախ անցնելով երկու գիշեր, վե-
րադարձանք կարակուրա: Մեր արշաւանքը ան-
տառում չը մնաց առանց հետեանքի: Ահա մօտ
երկու շաբաթ է, որ հրդեհի անուռն էլ չենք լը-
սում:

Բժիշկ Ա. Միրիմանեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, սեպ. 13-ին

Սեպտեմբերի 10-ին պարագմուծները ուսուց-
չական ժողովում հետեանքներն էին. առաւօտեան
փորձնական դասեր տուին թուաբանութիւնից պ.
պ. Աւետիսի Գուլլիկեանց և Ս. Աւագեանց: Ա-
ռաջին դասը վերին աստիճանի ծանօթութիւն, միա-
կողմանի և անաջող էր. ներկայ էին ընդամենը
70 հոգի: Մենք դարմանում ենք թէ գիւղական
խեղճ ուսուցիչները, ինչ պիտի սովորէին մի
այդպիսի խառնակիթոր դասից. պարոնը, ինչպէս
երեւցաւ, ոչ չին եղանակների հետ էր ծանօթ և
ոչ էլ նորի: Գասառութեան ընթացքը ցոյց տա-
լու համար բաւ առ բաւ. տղաքում ենք թէ
պարոնը ինչպէս սկսեց իր դասը և ինչպէս վեր-
ջացրեց: Աղօթք անել տալուց և ձեռները սեղա-
նի վրա դարձել տալուց յետոյ դասը սկսում է
ուղղակի հետեանք բառերով. «Այժմ մենք պիտի
իմանանք թէ մի դերձակ քանի վերաբերու է կա-
րել և որքան կարելիաբար է ստացել» (այս իբրեւ
առաջին աստիճան է, որ կոչվում է մանկավարժ.
մէջ իբրեւ նախապատրաստութիւն...): պարոն
դասաւանդում չարունակում է. «Ինչ բան է վերաբ-

պէտք է կարծել, որ իւրաքանչիւր լեզու ունի իր
յատուկ առանձին մասը մեր ուղեղի մէջ և որ
նրան զարգացնելով մենք զարգացնում ենք մեր
ուղեղի մէջ այդ մասը և չինում մեր անձի, մեր
մարմնի մէջ ն իւր թակ ան առանձնայատկու-
թիւնը: Այժմ դառնանք մի ուրիշ հարցի:

Ինչպէս յայտնի է, չնաւոր էակների անհատա-
կան առանձնայատկութիւնները, նրանց ժառան-
գաբար փոխվելու և սերունդից սերունդ աստիճա-
նաբար զարգանալը կազմում է հիմնը այն տեսու-
թեան, որը այժմս ընդունված է գիտութեան
մէջ և ստացել է Գարվինի թէօրիայի անունը: Այդ
տեսակետից պէտք է նայել և հոգեկան առանձ-
նայատկութիւնների վրա: Թէպէտ և կրթութիւնը
կարողանում մի և նոյն սերունդի մէջ հարթել
շատ մտաւոր առանձնայատկութիւններ, բայց
այնու ամենայնիւ նրանց գոյութիւնը անկարելի
է զանց առնել, եթէ ընդունենք, որ մտածողու-
թեան և զգայունութեան արմատը, ստեղծող
մարմինն է, մարդու ուղեղը, ջղերն է: Բացի դը-
րանից յայտնի է, որ լուսաւորված մարդու ուղեղը
շատ զանազանվում է վայրենու ուղեղից, թէպէտ
և որովհետ չեն այդ զանազանութեան աստի-
ճանները: Ուրեմն, ինչպէս աւելի զարգացած կուրծ-
քը, կմախքը արտաբերում է աւելի իր նման ժա-
ռանգութիւն, այնպէս և աւելի զարգացած ուղե-
ղը պէտք է թողնէ իր զարգացման հետքերը յայտնի
սերունդի ուղեղի վրա: Ուրիշ բան է, երբ կրթու-
թիւնը չէ զարգացնում այդ գործարարը, երբ խե-
ղճ մարդու սերունդը չէ լուսաւորվում, այսինքն
չէ զարգացնում մտածողութեան, ուղեղի այն սաղ-
մերը (зачаток), որոնց նա իր պապերից ժառան-
գաբար ստացել է: Գարվինի թէօրիան ունի երկու
ձայր. մէկը յիշածն է, իսկ միւսը այն, որ եթէ
ընդունակութիւնները, առանձնայատկութիւնները
չեն մարդկում, գործարարում, օրրոսօրէ փոքրա-
նում են, նուազում և վերջապէս անհետանում:

Կուն.—Ինչից են կարում պարտօն.—մահողից,
պարտականից, մահմուտից, դրամից... իսկ սեր-
ունը.—մահողից, տրիկոյից և այլն. Ինչից են
չինում մահողը, տրիկոն.—բրդից, ինչ բրդից.—
ոչխարի. այդպիսի կտորներ այստեղ պատրաս-
տում են թէ ոչ—ոչ, մահողը ուրիշ տեղերից է
ստացվում: Երբոր մահողից չոր են կարում ա-
ռաջ ինչ են անում.—ձեռում են. ձեռնուց առաջ
ինչ են անում.—չափում են, (խնդրեմ, ընթեր-
ցողներ, չը մոռանալ որ սա թուաբանութեան
դաս է), նա շարունակում է կրկին.—Ինչով են
չափում.—արշինով. Ինչերն են չափում արշինով.
—մահող, դրամ, չիթ և այլն. էլ ինչ են չա-
փում արշինով.—յատկան, առաստաղը, սեղանը
և այլն: Պարոն ուսուցիչը բացատրում է թէ պա-
տի չափերը չեն չափում. շարունակում է նա
չափերը մասին մանրամասն խօսել և մի ամբողջ
1/4 ժամ դասից չընդլեւայ յետոյ սկսում է ուղ-
ղակի խնդրել. «մի դերձակ 89 արշին մահողից
ուղում է կարել վերաբերունք և այլն» այդ խըն-
դիրը վճելուց յետոյ աղօթք է անել տալիս և
աշակերտաց արձակում: Սովորակաւ կարող չը
խանդարելու համար այդ օրինակելի (!!!) դասը
ենթարկվում է ըննութեան:

Հայր Ղազարեանը յայտնում է թէ դժուր մի-
անգաման միակողմանի էր և միմիայն մի գրաւոր
խնդիր վճեցին մի ամբողջ դասին, և մի 1/4
ժամ նկատողական ուսումով էին զբաղված ա-
շակերտները: Արժանապատիւ հայրը աւելորդ հա-
մարեց նախապատրաստութիւնը, ասելով որ այդ-
պիսի նախապատրաստութիւն գուցէ նշանակու-
թիւն ունենայ կրօնի և մայրենի լեզուի համար,
բայց թուաբանութեան մի հասարակ խնդրի հա-
մար միանգամայն աւելորդ էր համարում: Հայր
Ղազարեանը յայտնեց որ պարոն կար. Թէմուրա-
զեանցի առաջին օրինակելի դասը, որ նա տուեց
ուսուցչական ժողովում թուաբանութիւնից, աւե-
լի բազմակողմանի ձեւեր ունէր և աւելի հետա-
քրքիր էր և օրինակելի: Պարոն Մատինեանց նը-
կատում է, որ երբ վարդապետը զբաղվում է մի-
այն խնդրի վճելով, պէտք է գտնէ աշակերտ,
որ այդ խնդիրը բազմակողմանի կերպով ցոյց տայ:
Պ. Թաւարեկեանը և պ. Տէր-Յովհաննիսեանը
յայտնեցին, որ 4×15-ի բազմապատկութիւնը մի-
անգամայն սխալ կատարվեցաւ, այսինքն փոխա-
նակ մասնիկները, պարտօններ ստացվեցան և մի
1/4 ժամ ստիպվում են հասկացնել դասախօսին
իր սխալը: Պ. կար. Թէմուրազեանը յայտնեց թէ
օրինակելի դասին հարկաւոր է, որ ուսուցիչը
ցոյց տայ, դասը բազմակողմանի կերպով և

Անտարակոյտ, առողջ կազմուածքը, զարգացած
ուղեղը պէտք է իր ժառանգներին տալ աւելի
կարողութիւն զարգանալու, քան թէ թոյլ կազմ-
ուածքի, ուղեղի տէր մարդիկ, մանաւանդ երբ
այդ առանձնայատկութիւնները մեծանում.—պնդ-
վում են սերունդների, դարերի ընթացքում. օրի-
նակ, տեւորթ Թափրիկացին (БЕГЛЕР) անմիջապէս
արտաբերում է սեւամորթ զաւակ, թէպէտ և նա
փոխելով իր կեանքի պայմանները, ապրելու տե-
ղը, ջերմ տրոպիկական կլիման բարեխառն կա-
ցուրտ կլիմայի կարող է սերունդից սերունդ աւե-
լի սպիտակ գոյն ստանալ, բայց եւրոպացու գոյն
ստանալու համար շատ դարեր են հարկաւոր:
Ջղային սխառեման, մտածողութեան գործարարը,
ուղեղը ստատիկ փոփոխական և առաձգական է,
մեծ կախումն ունի կրթութենից, բայց այնու
ամենայնիւ կարելի է պապերից, ծնողներից ա-
ւելի նորը, աւելի կատարելագործված գործա-
րան, ազգաբառա ստանալ լուսաւորութեան
համար և աւելի «անտաշ» կոպիտ անգի-
թի հարկէ, մենք չունենք միջոց չափել դոցա
զանազանութեան աստիճանները և ամեն օր տես-
նում ենք օրինակներ, որոնք իր թէ մեր ասածի
հակառակն են ցոյց տալիս, բայց եթէ կարողա-
նանք ուսումնասիրել և չափել ուսմիկ դասի,
գիւղացի ուսանողների աշխատանքը, տանջանքը
ուսում-գիտութիւն ստանալու ժամանակ և համա-
մատել լուսաւորեալ դասի որդիկներից գիւրու-
թիւնների հետ մի և նոյն ուսման համար, այն
ժամանակ գուցէ կը համոզվենք, որ ճշմարիտ ու-
ղեղի ժառանգական յատկութիւնները անհշան
չեն: Գիւրազագ, շարժուն (այլուով) էակների
սերունդը աւելի նոցա նման է լինում, քան թէ մի
բլթաղացի, կոպիտ, ծոյլ էակների սերունդը, որ
նաւանդ, եթէ այդ յատկութիւնները չարունա-
կում են զարգանալ դարերի միջոցում: Ինչ է սորա
պատճառը. ինչպէս աւելի զարգացած կազմ-

նկատեց որ պ. դասախօսը հարցերը շատ
շուտ-շուտ էր առաջարկում. պ. կար. Թէմ. ամե-
նապաշտ եղանակը ընդունում է լուռ եղանակը,
այսինքն որ ուսուցիչը երբ մի խնդիր առաջար-
կում է, պիտի աշակերտին ժամանակ տայ մի-
ութեամբ խորհելու և մտածելու և ոչ թէ միմեանց
ետեկից հարցեր առաջարկելով միջոց չը տալ ա-
շակերտին կենտրոնացնելու իր մտածողութիւնը:
Պ. Սպարապետեանը ևս շատ թերութիւններ է
նկատում և մի առ մի յիշում: Պ. Աւագեանցի
դասաւանդութիւնը շատերը չը ընկնեցին, ասելով որ
պ. դասախօսը անձանթ էր աշակերտների
զարգացման հետ, ինչպէս որ առաջին դա-
սախօսը: Վերջին խօսքը արվում է պ. պ.
դասախօսների. պ. Ա. Գուլլիկեանցը շատ թոյլ
կերպով և առանց ազդեցողների աշխատում էր ի
րան պաշտպանել ասելով թէ ժամանակը քիչ էր
(պ. նախադասը յիշեցնում է, որ դասախօսը ժա-
մանակը ինքն է որոշել) և թէ իր բացատրածն
էր ուղիղ, այստեղ նորից ընդմիջվում է և վիճա-
բանութիւնները նորից շարունակվում, որտեղ նը-
կատողները հաստատում են դասախօսի սխալները:
Վերջնաւորուց յետոյ լսվում են մի քանի ծափի
ձայներ. պ. նախադասը շարաւած հարցնում է.
այս ինչ կեղծ ծափահարութիւններ են լսվում,
չէ որ դասը այդքան թերութիւններ ունէր. հե-
տեւում է ծիծաղ. երեւում է, որ մի որոշեալ խումբ
արհեստական կերպով, ինչպէս «Մշակում» մի քա-
նի անգամ գրկեցաւ, ծիծաղում են, և ծափահա-
րում են և շուտանում: Մենք դիտաւորութեամբ
փոքր ինչ մանրամասն նկարագրեցինք դասի ըն-
թացքը, ցոյց տալու համար, թէ մեր խեղճ գիւ-
ղական ուսուցիչները, ինչ օրինակ պիտի ասեն
հետեւը այսպիսի խաղ և անմշակ դասերից: Ե-
րեկոյեան զբաղմունքը աւելի հետաքրքիր էր. պ.
Պետրոսեանը մի ընթերցաւ կարդաց մանկա-
կան խաղերի մասին, նկարագրելով և համա-
րելով 30-ի չափ խաղեր: Պարոն Թաւարեկեանը
կարդաց մի ընթերցաւ թուանշանների գործածու-
թեան մասին, որով նա հաստատում էր, թէ
թուանշանները դժուր աւելորդ և մեծապար-
սեմ ընթերցանութիւններ են: Պ. Քամալեանցը
յայտնեց, որ ինքն մի քանի տարի է, որ հաւա-
քած ունի այնպիսի խաղեր և յիշեց մի քանի
նոր խաղեր. պ. Բէկաւազեանը առաջարկեց ըն-
թերցանելու տպագրել իր առաջարկած խաղերը օ-
րագիրներում: Պ. կար. Թէմուրազեանցը յայտնեց
որ ոչ թէ միայն պ. Պետրոսեանը, այլ և բոլոր
զաւառացիները պիտի աշխատեն հաւաքել մանկա-
կան խաղեր, խաղալիքներ և երգեր և սպա հրա-

վածքը, կմախքը աւելի իր նման է արտաբե-
րում, այնպէս և աւելի սուր, զարգացած զգայու-
թեան ջղերը իրանց նման են արտաբերում,
թէպէտ, կրկնում ենք, կրթութիւնը պատու կա-
րող է հրաշքեր գործել, բայց արմատի (зачаток)
յատկութիւնները, ժառանգականութիւնը պէտք է
ունենան իրանց լուրջ նշանակութիւն: Մի և
նոյնը պէտք է ամենայն իրաւամբ ասել և այն
ջղերի կամ խորշերի մասին ուղեղի մէջ, որոնք
կատարւում են այս կամ այն լեզուի, մանա-
ւանդ երբ նոցա զարգացման հետքերը հաւաքել,
ղիղվել են դարերի ընթացքում: Ազգային լեզուի
ջղեր, վանդակիկները չեն կարող առանձնապէս
չը զարգանալ, երբ լեզուն գործադրվում է, զար-
գանալով չեն կարող որոշ հետքեր չը թողնել,
հետքեր թողնելով, չեն կարող ժառանգաբար չը
փոխվել սերունդից սերունդ, իւրաքանչիւր յաջորդ
սերունդ իր հերթին կարող չէ այդ հետքերը չը
կարգացնել, եթէ գործ է ածում իր մայրենի լեզուն:
Ուրեմն, իւրաքանչիւր ազգ, սերունդ պէտք է
ունենայ իր ուղեղի մէջ այն լեզուի հարստու-
թեան սերմերը, տարերքը (элементы), որով խօ-
սել են նորա պապերը դարերի ընթացքում, ինչ-
պէս նորա կազմուածքը ունենում է իր մէջ այն
կատարութեան արմատը, որը զարգանալով թոյլ
է տալիս նորան զինանալ այնպիսի կլիմայի,
կեանքի, որը շատ ալ ազգիների համար անտա-
նելի, մահաբեր է. օրինակ. էսկիմօսի երեխայի
մարմինը պէտք է ուրիշ կազմակերպութիւն ու-
նենայ, քան թէ մեր երկրի երեխան, պատճառ,
այն կեանքը, որը կարող է բնականաբար տանել
էսկիմօսը մեր երեխան երբեք չի տանի, թէն
նա մի և նոյն ճանգամանքների մէջ մեծանայ,
ինչպէս և էսկիմօսը: Այնպէս և այն ուղեղը, որը
չունի իր մէջ կազմութիւն և այն պատմական
կեանքից ստացած, օրինակ հայոց լեզու սովորե-
լու, նա կարող չէ մրցել բուն հայի հետ, ինչպէս

տարակել, նա մի և նոյն ժամանակ յարգելով
Գեղամեանի առաջարկութիւնը յայտնեց ժողովին
որ տրիկն Բաբայեանց, պ. Ազապեանց և ուրիշները
ձեռք են դարկել մշակելու մեր ազգային խաղերը,
խաղալիքները և երգերը: Երկրորդ ընթերցաւ ա-
ռիթով ժողովականների մեծ մասը հակառակ
մտքեր յայտնեցին թուանշանների գործածութեան
մասին. պ. Բէկաւազեանը ոչինչ չեմաներ չէր
նկատում թուանշանների գործածութեան մէջ. պ.
Մեղրուեանցը չէր ընդունում թուանշանները և
զլխաւորապէս ուսուցչի անձնաւորութեան էր մեծ
նշանակութիւն տալիս աշակերտների յառաջա-
դիմութեան աստիճանը չափելու: Պարոն Թէմու-
րազեանը յայտնեց, որ այն ուսուցչիները, որոնք
ուղում են աշակերտների հետաքրքրութիւնը և
աշխատասիրութիւնը արժարժել թուանշաններով,
նման են այն մանկավարժներին *, որոնք այդ-
բոլորէն հեշտ կերպով սովորացնելու համար,
քաղցր խմորից չինում էին պիւրօմիաներ ա, բ,
գ, և այլն տառերի ձևով և տալիս էին այն ա-
շակերտին, որ լաւ էր սովորում տառը: Պարոնը
չէր ընդունում թուանշանների գործածութիւնը և
առաջարկում էր մի օգտակար միջոց, այն է, որ
ուսումնասիրող աշակերտին աւարտելուց յետոյ
պիտի վկայականի մէջ գրի թէ աշակերտը ըն-
դունակ է շատ կամ քիչ և կամ անընդունակ է
ինքնագործունէութեան և ինքնակրթութեան: Պա-
րոնը հաստատապէս պնդում էր, որ աշակերտի
վկայականը միայն պիտի լինի յայտարար և չափ
այն բանի, որ աշակերտը կենդիւ մէջ մտնելով ունի
ընդունակութիւն վերոյիշալ յատկութիւնների և
չը պէտք է ցոյց տալ, թէ զարդում աշակերտը
լաւ է սովորել այս կամ այն առարկան: Միա-
ցեալները նոյնպէս հակառակ էին թուանշանների
գործածութեան. այս հարցը չը թուանշանից առ և
ժողովի մեծամասնութիւնը եկաւ այն եզրակա-
ցութեան, որ թուանշանների գործածութիւնը ա-
ւելորդ է:

* * *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 14 սեպտեմբերի

Գանվելով վաճառական դասակարգի շրջանում,
սեպտեմբրի 14-ին հետաքրքրվելով շուրջս բոլորող
տխուր երևոյթներով, ստիպված եմ գրիչ առ-

*) Պարոնը անխարկում է այստեղ ֆիլանտրո-
պիստների շփոթիւն, որի ներկայացուցիչն էր
Բազեղովը և այլն:

Մ. Ն.

և հայը ուսի նստ ուսերէն սովորելու ժամանակ:
Այստեղից չէ կարելի եզրակացնել, որ հայը չէ
կարող շատ լաւ կերպով ուսերէն սովորել, ոչ,
այլ թէ նորա համար պէտք է աւելի դժուար լի-
նի, քան թէ ուսի համար: Ինչպէս բնական ուղ-
ղութիւնը պահանջում է կրթիւ աֆրիկացուն նո-
րա կլիմայում, կեանքում, այնպէս և բնական է
այն լեզուով կրթիւ մարդուն, որ նորա մարմինը,
ուղեղին յատուկ, յարմար է: Որքան մարդկութիւնը
առաջ է գնում, այնքան նորա կազմուածքը, ու-
ղեղը մի որոշ ուղղութեամբ կատարելագործվում,
զարգանում է սերունդից սերունդ և այդ առա-
ջադիմութիւնը նրկթապէս զորոյվում է նորա
կազմվածքի, ուղեղի վրա և ժառանգաբար փոխ-
վում յաջորդ սերունդներին, իբրեւ նորա դարեր
կեանքի հարստութիւն, պատու: Իւրաքանչիւր ազ-
գին յատուկ ֆիլիկական և հոգեկան առանձնա-
յատկութիւններ, նորա մարմնի լեզուն, նորա
լեզուի բովանդակութիւնը, նորա մտածողութեան
կերպը և ոյժը են այն արտոնութիւնները, առա-
ւելութիւնները, որը նա ստանում է ի ժառան-
գութիւն իր պապերի պատմական կեանքից, ինչ-
պէս այդ պատմութեան հորհով նա ստանում է
մի որոշ գծապիւծիւն դէմքի, որոշ կազմվածք,
ուղեղ և ուրիշ օրգաններ, Գարվինի թէօրիային
համեմատ, ինչպէս հասարակ կենդանիների զա-
ն ազան տեսակները (разновидности).
Ուրեմն, վերջացնելով մեր խօսքը, պէտք է ա-
սենք, որ մայրենի լեզուն անհատական ցեղական
կրթութեան մէջ տալիս է մեզ այն զորաւոր լը-
ծակը, որ թողնել են մեզ մեր ազգի ուժեղ հան-
ձարները, իբրեւ միակ ժառանգութիւն իրանց
դարեր պատմական կեանքի և բնական գիտու-
թիւնների համեմատ մեզ պատմական մեզ գործա-
ծել նորան իբրեւ ամենազօրեղ միջոց ազգի լուսա-
ւորութեան:

Բժիշկ Ա. Ստամանեանց

նեղ ձեռքս և նկարագրել վաճառականներին ընդհանրապես սպառնացող վտանգը:

Ներկայումս ոչ թէ միայն գաւառների մէջ, այլ մինչև անգամ կովկասեան զէկաւոր թիֆլիս քաղաքի ընդհանուր վաճառական դասակարգի մէջ տիրում է յուսահատութիւն, որտեղի խորքերից արտադրվում է դառն և տխուր հառաչանք, բոլորի մէջ տիրում է վաճառականական անասելի գերեզմանական երբեք չեղած լուռութիւն և այսպէս ասած քեռասառութիւն:

Եւ այս լինում է ինչ ժամանակ. հէնց այդ է ցաւալին որ այն ժամանակ, երբ կովկասի և Անդրկովկասի գաւառական քաղաքներից և դիւղերից թափվում են թիֆլիս բոլոր կապիտալիստները, տարին այն էլ մի անգամ միայն:

Այս բոլորիս որ վաճառականին խօսեցնում են, զանգառվելով սրտի խորքերից այնպէս մի ծանր ան է քաշում, որ մուկը թիֆլից դուրս է գալի, յիշելով անցեալում վաճառականութիւնը օգտաւէտ դիւղի մէջ կանգնած լինելը, և տեսնելով այժմեան վաճառականութեան թուլութիւնը, որով շատերին վտանգ է սպառնում: Պարտաւոր էր փող է ուզում՝ փող չը կայ, ում մի ժամանակ ապառիկ է ծախել, ոչ թէ ժամանակն անցած մի—երկու տարի դեռ չէ կամենում վճարել, այլ մինչև անգամ անանկացել է, ով գիտէ, ապրանքը կիսագին ծախելով, որը իրեն ընտանեկան հոգեւոր է հոգացել, որը թղթախաղումն է տարվել, և որը քէֆում վատնելով, այժմ անանկացել է: Այս դժբաղդութեան հետեանքը մենք բացատրում ենք մի քանի անակէտով:

Նախ՝ պատերազմից յետոյ երբ սրա կամ նրա ձեռքը ագին թէ անադին միջոցներով մի 500 կամ 1,000 ռուբլի փող ընկաւ, ամբողջապէս նա ձեռք առաւ մի մանուֆակտուրային մազալին, մեծ մեծ անուններ յատկացնելով խաւովին. օրինակ, Саксонский магазинъ, Гамбургскій, Швейцарскій магазинъ, և այլն և այլն: Ո՛վ գիտէ թէ այդ վաճառականների հայրերը, պապերը ոչ թէ Համբուրգ, Սակսոնիա, այլ և թիֆլիսը անգամ տեսած չը լինէին, բայց իրենք սովորել են մեծ մեծ բրթիկ, իսկ այդ աւելի շատ երեւցաւ վերջին ժամանակներում Նրեանում:

Երկրորդ՝ այդ յառաջացաւ վաճառականաց ընդհանուր անհամբաւութիւնը: Օրինակի համար կան օտարաբարաբացի վաճառականներ թիֆլիսում հէնց այժմ էլ, որանց աջովիկ է մի երկու անգամ, մի քանի հարկեր բոլոր կանխիկ դրամի ապրանք գնել, նորանք անմիջապէս ձեռք են բերում այստեղի վաճառականաց մօտ հաւատարմութիւն (доверие), մանաւանդ երբ մի երկու անգամ էլ նիսիա են տանում և վճարում: Հարպիկ վաճառականը օգտվելով իր ձեռք բերած իրաւունքից, սորանից և նորանից մի տարվայ մէջ հաղորդելով ապառիկ է տանում, իսկ այստեղի վաճառականները ոչխարի նման հետեւելով մէկը միւսին, աչքերը խիստ սկսում են մուրհակներ գրել, այնպէս կարծելով թէ անպատճառ չլռի մէջ հալվայ կայ: և ահա սորան հետեւում է երրորդը, չորրորդը, հինգերորդը:

Իսկ հիւր վաճառականը ճարպիկութեամբ տանելով բաւական գումարի ապառիկ, մի օր տեսաւ ունեցածը փոխարկեց կղբօր, կնօջ, կամ աղգականի անունով, ծախելով կիսագին բոլոր ապրանքը, թողնց միայն խաւովին դատարկ տախտակները, մի քանի փաստապաշտ ապրանքի հետ, և կտոր ընկաւ: Գէն, դու գնա այնուհետև ինչքան կուզես հարսանքից յետոյ դուռնա անել տուր, ինչ կօշովին:

Երրորդ՝ այժմեան վաճառականը ապրանքը ըստանալուց յետոյ, առանց աչքի առաջ ունենալու գնի որքանութիւնը, ծախում է միայն նայելով իր դրացիին, որին նոյնպէս հետեւում են միւսները. չը նայելով անգամ թէ իր դրացին ապրանքը կիսագին է ծախում, այնու ամենայնիւ, մուտաբար խաթրը չը միալու կամ մուշտարին ձեռքից չը թողնելու, ինքն էլ է կամաւ խաթարում վնասի առաջ, վաճառում է աջ ու ձախ, կարծիք էլ չէ գնալու նորից գնելու համար: Զարմանալի բան, դուցէ քո դրացին ապրանքը գտել է կամ գողացել է, ինչու ևս դու էլ նրա խորովը չաղակում, դուցէ քո դրացի վաճառականը կամենում է իրեն ձգելու ջուրը, միթէ դու էլ նրան պիտի հետես. դուցէ քո դրացին արհեստական կերպով անանկանալու միտք ունի, միթէ դու էլ պէտք է անանկանալ:

Ոչխարներ միայն ունեն այդ սովորութիւնը. երբ հօտիցը մէկ ոչխար իրան ձգեց սարից, քարից, ձորից, նորան հետեւում է ամբողջ հօտը:

այդ օրինակը իրան կարծես ընտրած ունի մեր վաճառականութիւնը, իբրեւ կատարելատիպ:

Գիտեմ, շատերը վաճառականներից կարդալով այս յօդուածը, պէտք է ներանան, դուցէ անգամ զօռ տալ,—բայց նախ և առաջ թող ինձ ասեն պ. պ. վաճառականները ինչու երբ մեր վաճառականը անծանօթ վաճառականին ապառիկ է թողնում, նախ չէ հարցնում իր այն դրացիին քաղաքացուն, որոնք իրենից առաջ գործ են ունեցել նորա հետ. դուցէ ոչ մէկի պարտքը չէ վճարել: Ինչու էք աչքերը խիստ դործ տեսնում: Ես ծանօթ եմ մի քաղաքացի վաճառականի հետ, որը հինգ տարի սրանից առաջ դործ սկսեց առանց ոչնչի, իսկ այս տարի հաշուեց երեւցաւ որ նրա ակտիւր կազմում էր 8,000 ռուբլի, իսկ պատեր 18,000 ռուբլի, ուրեմն բացի վատտակը դրամով չէիցը վնաս է արել, այսպէս ասած պարտք է մնացել 10,000 ռուբլի, բայց նա թիֆլիսում աւելի ընդունելութիւն գտաւ այս տարի:

Մտնելով բուն խնդրի մէջ մենք ակամայից ասում ենք որ հաշուաւոր թիֆլիսը ունի իր վաճառականաց ակտիւրը, որտեղ ամեն գինի բողովում են մեր հարուստ վաճառականները: Այդ պատճառով ստիպված եմ ինձ ու ինձ հարցնելու թէ այդ կտուր ինչին է ծառայում. կը պատասխանեմ միայն որ ոչնչի: Այնտեղ հաւաքվում են փոխանակ մէկը միւսի ցաւերին դարման անելու, մէկը միւսին առևտրից հարցնելու, ընդհակառակը կանաչ սեղանի շուրջը բողբոջած, անտարբեր գէպի ընդհանուր սպառնացող վտանգը, միայն շտապի և պրէֆերանսի թղթերը ձեռքները առած:

Եւ մինչդեռ վաճառականների մէջ չը կայ ընդհանուր համբաւելութիւն, որը մայր է ծաղկման ընդհանուր վաճառականութեան, բոլորն էլ անհոգ, անփայլ, անտարբեր են, ի հարկէ վաճառականութիւնն էլ այսպէս անմիջապէս, կործանել է հոգեւոր դրութեան մէջ է մնալու:

Գառնելով պ. պ. վաճառականներին, խորհուրդ կը տամ նրանց վերջապէս սթափվել. ժամանակ է խորհել ընդհանուրից շահերի համար, որովհետեւ մէկը ամենիս համար է, իսկ ամենքս մի—նի համար ենք:

Ս. Գ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մի ռուս երիտասարդ, որ երկար ժամանակ աշխատակցում էր ռուս լրագրիւններում, խնդրում է մեզ յայտնել որ յանձն է առնում այլ և այլ գրական աշխատանքներ, նոյնպէս ռուսերին լեզուով հրատարակութիւնների սրբազրութիւնը (կօրեկութեամբ): Պարոնի հասցէն կարելի է իմանալ «Մշակի» խմբագրատանը:

Պ. բոխիկ Նաւասարդեանց խնդրում է մեզ յայտնել, որ առաջվայ պէս բնակվում է Կուկիայի մասնաւոր Հրեանդանոցում և ընդունում է հիւանդներին ամեն օր 10 1/2 ժամից մինչև 12 ժամ:

Գաղաքից Գուսլի չարթաթիւնի խմբագիր, իման Ֆելիկսովիչ Տիւրովիկի, որ այժմ կրկին աղօթատեղեւան է պարագում, խնդրում է մեզ յայտնել որ յանձն է առնում բոլոր անդրկովկասեան դատաստանական հիմնարկութիւններին մէջ թէ քաղաքական և թէ քրեական գործերի պաշտպանութիւնը: Պարոնի հասցէն հետեւան է. Тифлисъ, Саперная улица, № 5.

Ներկայ համարում, բանասիրականի բաժնում տպւում ենք բոխիկ Առատամեանի յօդուածը, որով յարգելի բոխիկը պատասխանում է մեր լրագրի № 161 մէջ տպված բանասիրականին, ընկելով լեզուն Ֆիլիթիլիական տեսակէտից: Թէ և յօդուածի սկզբում յարգելի յօդուածադիրը ասում է թէ Գրիգոր Արծրունու յօդուածի մի քանի կէտերը ենթադրութիւններ են միայն և դեռ ապացուցված չեն բնական գիտութիւններով, բայց վերջը ինքն էլ նոյն ենթադրութիւնները ապացուցանում է Ֆիլիթիլիական տեսակէտից, կատարելապէս հաստատելով Գ. Արծրունու յօդուածի մէջ ասածները:

Մեզ խնդրում են տպել հետեւալը: «Մի հմուտ ուսուցիչ, որ երկար ժամանակ պարագել է ուսուցչութեամբ, տալիս է մասնաւոր դասեր ընտանիքներում, զլիսաբարապէս հայերէն լեզուից, թատերականից և բնական գիտութիւններից:

Պայմանները կարելի է իմանալ «Մշակի» խմբագրատանը:

Տպելով «Մշակի» ներկայ համարում Հաւաքաւրի Մարիամիան օրիորդական դպրոցի յայտարարութիւնը, մենք մեր կողմից հարկաւոր ենք համարում մի քանի խօսք ասել այդ դպրոցի մասին: Վատ է թէ չաւ է այդ դպրոցը, նա դարձաւ ամբողջ Հաւաքաւրի ահալին հայաբնակ թաղի մէջ միակ օրիորդական դպրոց է, որի կարեւորութեան վրա յիշեալ թաղում. թիֆլիսի հայ հասարակութիւնը դժբաղդապէս շատ քիչ ուշադրութիւն է դարձնում: Այդ դպրոցին չէ օգնում թիֆլիսի հասարակութիւնը. ուշադրութիւն ենք դարձնում նրա վրա, որպէս Հաւաքաւրի միակ օրիորդական դպրոցի վրա, թէ մեր Բարեգործական ընկերութեան» և թէ մանաւանդ մեր «Կանանց բարեգործական ընկերութեան»: Չը նայելով որ այդ դպրոցը զարկ է ամեն նիւթական միջոցներից, նա այնու ամենայնիւ, անու է ինչ որ կարող է ուսումնական կողմից. մեր ստացած տեղեկութիւններից յայտնվում է որ նրա երրորդ դասարանի աշակերտները Գայեանեան և Անանեան դպրոցների երկրորդ դասարանն են ընդունվում, իսկ այս տարի յիշեալ դպրոցի աշակերտներին իրից մինը ընդունվեցաւ մինչև անգամ երրորդ դասարան: Գպրոցը միջոցներ չունի և ահա չորս տարի է որ նրա տեսուչը, որքան մեղ յայտնի է, ճիւղապէս է վարում իր հաշիւները: Իսկ դպրոցի մէջ միւս աշխատողներից, ով որ ունի էլ ստանում է, ստիպված է բաւականապէս ամենամանկան վարձով: Միթէ թիֆլիսի հայ հասարակութիւնը չէ հասկանում որ չը պէտք է թողնել քաղաքիս ահագին հայաբնակ թաղը առանց խնամքի ուսման կողմից և պէտք է վերջապէս օգնութեան ձեռքը մեկնել այդ թաղի մէջ եղած միակ օրիորդական դպրոցին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Թղթի արդիւն արեւոյ ռուբլինը: Ներկայումս ամբողջ երկրագնաւ վրա 4,000 թղթէ գործարաններ կան, որոնք իւրաքանչիւր տարի ընդհանրապէս երկու միլիարդ ֆունտ թուղթ են արտադրում: Այդ քանակութեան կէսը գործ է անվում տպագրութեան վրա, 1/6 նամակների վրա, մնացածը առարկաները փաթեթելու և ուրիշ նպատակների համար: Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգները իւրաքանչիւր տարի արտադրում են աղբաբնակութեան իւրաքանչիւր անձի համար 15 ֆունտ թուղթ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՒՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 սեպտեմբերի: Հրատարակված են օգոստոսի 27-ին Բարձրագոյն Հաստատված Կանոններ մամուլի մասին, որոնց համեմատ առանց ցնկաւորայի հրատարակվող լրագրիւնները, որոնք դուրս են գալիս շաբաթը մէկ անգամից ոչ պաւաս, պարտաւորվում են երրորդ նախադրուելութիւնից յետոյ ներկայացնել իրանց համարները ցնկաւորային մինչև երեկոյեան 11 ժամը: Համարների կալանաւորումն թոյլ է տրված ցնկաւորների առանց դատաստանական գործը սկսելու: Թողումսի հիշեալի անունը պէտք է յայտնվի միւստորի պահանջով: Հրատարակութիւնները դադարեցնվում են խորհրդի վճռով որ կազմված է ներքին գործերի, ժողովրդական լուսաւորութեան, արդարութեան միւստորներից և սինօդի օբեր-պրօկուրօրից: Թագաւոր կայսրը բրիլիաններով դարգարված ստֆիրի մասանի շնորհեց ժամագործ Սօնին, որ արժանացաւ ներկայացնել Թագաւորին ոսկէ ժամացոյց մի ամսով լարվող:

ՍԱՄԱՐԱ, 15 սեպտեմբերի: Սեպտեմբերի 14-ին բացվեցաւ ամսականաւոր: Սպասում են վատ հետեւանքների դրամական պակասութեան և հացի էժանութեան պատճառով:

ՕՐԵՆԲՈՒՐԳ, 15 սեպտեմբերի: Առևտրական հասարակութիւնը ներկայացրեց գնեւրալ Չերնիսեվին Օրենբուրգի պատուաւոր քաղաքացու կոչումը:

ԿԱՍՏՐՈՒՄ, 15 սեպտեմբերի: Նահանգական դեմաւոյի ժողովը յանձնարարեց վարչութեանը միջնորդել Կաստրօմայի մէջ գիւղական բանկի բացման մասին և 30,000 ռուբլու կրեդիտ բաց արաւ այն գիւղացիներին օգնելու համար, որոնց ցանքերը փչացել է որդը:

ՄՍՍԿՎԱ, 15 սեպտեմբերի: Աշխարհահեղէսի էկպօնենտներին, որոնք բաղդ ունեցան զանազան առարկաներ մատուցանել Կայսրին և Կայսրուհուն, բարձրագոյն շնորհակալութիւն է յայտնված: Աշխարհահեղէսի ընձանքերի բաժանելը սեպտեմբերի 21-ին կը լինի: Շուտով բաւարարական թագաւորը կայցելէ աշխարհահեղէսը:

ԵԿԱՏԵՐԻՆՍՈՒԱՎ, 15 սեպտեմբերի: Հացի առևտուրը հանդարտ է: Այդ հանգամանքը բացատրում են նրանով, որ Ամերիկայի հունձը չափազանց առատ է եղել:

ԼՕՆԻՍՆ, 15 սեպտեմբերի: Խեղիվը հասաւ Կայլիէ և համակրութեամբ ընդունվեցաւ աղգաբնակութեանց:

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՒՄ, 15 սեպտեմբերի: Լամանշի ջրանցքի նաւատորմը այսօր Բէլգրադ է ուղևորվում: Խորվաթիոյ ուղևորվեցաւ Ս. Պետերբուրգ:

ԿԱՏԱՐՐՈ, 15 սեպտեմբերի: Որովհետեւ այրանցիների և չերնօզօրցիների կուրնները սաստկանում են, սահմանի վրա չերնօզօրական զօրքեր են ուղարկված:

ԲՈՒՇՆՈՒԿ, 15 սեպտեմբերի: Իշխանը վերադառնում է, Բուխինայի թագաւորին այցելելուց յետոյ: Շուտով այստեղ սպասում են սերբիական թագաւորին: Բուչչուկ-Վարնայի երկաթուղու կառուցումն սկսվեցաւ:

ՊԵՏՏ, 15 սեպտեմբերի: Միւստորների խորհուրդը որոշեց պահպանել Բանիայի մէջ պատերազմական դրութիւնը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 սեպտեմբերի: «Нобель Врема» լրագիրը նկատում է, որ Արեւմուտքը յարձակվում է Ռուսաստանի վրա: Տրեանի պատճառով, մինչդեռ նրանց իր մօտ չէ թողնում: Փարիզի մէջ 5,000 զաւթական հրէաների էին սպասում և երկիւղ էին կրում նրանց մրցութիւնից փարիզի բանտերների հետ և հանգստացան միայն այն ժամանակ, երբ փարիզ ընդամենը 502 ռուսաց հրէաներ դաղթեցին: Գերմանիայի մէջ մաքսահարկի ոսկով հատուցանելը փոքրացրեց արդիւնաբերական առարկաների Ռուսաստան բերելը: Սերբիի զինաւորահանգանները միջնորդում էին դատաստանական քննիչների պաշտօնների նշանակելու մասին, բայց արդարութեան միւստորութիւնը մերժեց այդ միջնորդութիւնը: Անգլիական փոխ-հիւպատոսը յայտնում է իր կառավարութեանը Բաթումի նաւահանգստի չափազանց արագ զարգացման մասին, որ սպառնում է իւրեւ առևտուրը փօթից և տրանզիտը Տրապիզոնից: «Нобель» լրագիրը հաղորդում է, որ Ս. Պետերբուրգի մէջ մի ընկերութիւն է հիմնվում գիւտարական պարտականութիւնները կատարող անձանց օգնելու համար:

ՄՍՍԿՎԱ, 15 սեպտեմբերի: Սեպտեմբերի 14-ին եապօնական իշխանը Բրեստում երկաթուղով վարչապա ուղևորվեցաւ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 սեպտեմբերի: «Голосъ» լրագիրը հաղորդում է. Տեխնիկական ընկերութեան Խարկովի բաժնիւր խնդրեց տեխնիկական ժողովից միջնորդել Խարկովի մէջ տեխնիկական ուսումնարանի բացման մասին, որովհետեւ հարաւում տեխնիկների մեծ պակասութիւն կայ: Ժողովը այդ խնդրից համակրութեամբ վերաբերվեցաւ: Երէկ տեխնիկների ժողովը Մօսկվայի մէջ փակվեցաւ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԲՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՆՐԱՔԱՐԻ ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄԵԱՆ ՀԱՅ ՕՐԻՈՐԴԱՅ ԴՊՐՈՑՈՒՄ աշակերտուհիների ընդունելու սկսվում է սեպտեմբերի 14-ից և կը շարունակվի մինչև 25-ը: Հասցեն՝ Լազարեվսկի փողոց, տուն Մելիք-Շահապարեանցի: Տեսուչ դպրոցի՝ Կարապետ ԹԵՄՈՒՐԱՆՅԱՆՑ

ՎԱՐՁՈՎ ԵՆ ՏՐՎՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՆԵՐ որոնք նորոգված են և մասաններ ունեն: Մասանի ամբողջ հարկը ԳԻՆԻԻ պահեստի և վաճառման համար: Միևայլովսկայա փողոց տուն № 111, հարցնել դռնապան ԱՇԵՐԻՆ:

1—3

ԾԱՒՎՈՒՄ Է ԹԵՅ Կ. ԵՍ. ՊՕՎՈՐՈՒՄ իսկական ֆիրմայից ֆունտերով և արկղներով 1 ռ. 40 կ. մինչև 3 ռ. ֆունտը ընդհանուր 10%: **ԶԻՋՈՒՄՈՎ**: Գարվանսարայ Արծրունու Սիօնի մայր-եկեղեցու մօտ **ԱԼԽԱԶՈՎԻ** գրասենյակի մէջ № 9:

1—6 (1)

ՍՏԱՅՎԱԾ ԵՆ ՆՐ ԹՐՎՈՂ ՎԵՐԱԿՈՆԵՐ 6—18 ռ., կրակեր 3 ռ., գրաֆիններ և պատուհներ 25 կ., բաժաններ 7 կ., զրիչներ 144 հատ 20 կ. և այլն: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**: Նոյն տեղը ահաբիք քանակութեամբ վաճառ, թանաք, փողիներ մետաղներ արքերու համար, մեծ քանակութեամբ թէյ առաջին հունձի 1 ռ. 10 կ.—մինչև 2 ռ. ամենալաւ ֆունտը առանց թղթի: Հրացաններ, ռեվոլվերներ, երեսարբիչներ, ալբոմներ, փոստի թուղթ և այլն:

7—10

ԲԵԱՎԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ բարձր դաստան աշակերտ ցանկանում է աներում ԳԱՍՏԵՐ տալ: Նմանապես յանձն է առնում միևնոյն ուսումնարանի 1, 2, 3-րդ դաստանների համար աշակերտներ պատրաստել: Հասցեն կարող են իմանալ Գոլովինսկի պրոսպեկտի վրա, Վարշավայա պեկարնիայում, պ. Մարտիրոս Հախնապարեանցի:

2—5

Приготовляю УЧЕНИКОВЪ въ нисшія и среднія учебныя заведенія. Подробныя УСЛОВІЯ узнать въ домѣ Теръ-Давидова, на Полицейской улицѣ, № 22.

Хосроевъ

Въ Редакціи газеты «МШАКЪ»
Продается
БРОШЮРА

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКІХЪ АРМІАНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ԹԵՅ առաջին հունձի այս տարի չափազանց գոյնաւոր և հոտաւետ: Այդ թէյից **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է 25% էժան և աւելի լաւ քան թէյ ուրիշ տեղ: Օրինակ. Լաւ ԿՕՆԳՕ թէյ 1 ռ.—1 ռ. 20 կոպ., պատուական ՍԱՆՖԱ թէյ 1 ռ. 40 կ., հիանալի ՄՕՆԻԿ թէյ 1 ռ. 60 կ. այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ռ.—2 ռ. 50 կ., գեղեցիկ ԿԱՅՍԱՌ թէյ 1 ռ. 80 կ. և ամենալաւ ֆունտ-ֆունտ թէյ 2 ռ. մասը թէյ առանց թղթի: Նոյն տեղը սովորաբար լինում են 500 երկաթէ ՄԱՀԱԿԱՆՆԵՐ 6 ռ.—60 ռ., երկաթէ ԳՐԻՋՆԵՐ ամբողջ Անդրկովկասի համար, չօլաղ ֆրայ, Շեվիլդի ԴԱՆԱՆՆԵՐ, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ մազերի համար, հրացաններ ԳԱՌԻ, ԲԵԱՎԱԿԱՆ ՎԵՐԻ, ԹԱՄԲԵՐ Բարեբեթի, Կոլմանի նըշընայ, ԱԼԲՈՄՆԵՐ Շվարցի կէս գնով: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ, ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՑՈՒՄ** № 156, 157, 158, 159 և 100:

43—100

Թողեկով **ԹԻՖԼԻՍԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** տէրը ծախում է իր **ՀՈՂԵՐԸ** Նաբերեժնայ և Միխայլովսկայա փողոցների վրա, գրաֆիններ 25 կ., ալբոմներ կիսագնով և այլն:

15—15

ԱՂ. ՄԻՐՉՈՑԵԱՆԻ պատրաստական և **ԳԻՇԵՐՈՒԿ** դպրոցում տեղափոխվեցաւ սուրբ Նշանի փողոցը **ԱՐԻՍԱԼՈՄԵԱՆԻ** տունը:

4—5

Ինժեներ-ՏԵԽՆԻԿ յաճն է առնում կաղմէլ քաղաքի բնակարանների և ամարանոցների ՅԱՏԱԿԱԳԻԹԵՐ (ПЛАНЫ) և ՏԵՄԲԵՐ (Фасады) նոյնպէս վերահսկողութիւն շինութիւնների ժամանակ: Հասցեն կարելի է իմանալ „Մշակ“ խմբագրատանը:

ИНЖЕНЕРЪ-ТЕХНИКЪ беретса составлять ПЛАНЫ и ФАСАДЫ городскихъ и дачныхъ домовъ и руководить РАБОТАМИ. Адресъ можно узнать въ редакціи „Мшакъ“

4—10

ԲԱՅՅԻ ԽԱՄՍԱՅԻ ՄԷԼԻԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԳԻՆԷ Է 1 ռ. 50 կ.
Գիրքը բաղկացած է 467 երեսներից
Թիֆլիսում վաճառվում է
„Մշակ“ խմբագրատանը: — Կենտրոնական գրափառանոցում՝ Մերիմանովի տանը № 3 և 4. Պ. Զաքարիայ Գրիգորեանցի՝ Կոպկասեան գրափառանոցում: — Պ. Ինժեանցի ծխախոտի խանութում: — Պ. Շահինեանցի ծխախոտի խանութում:
Օտարադարձացիք կարող են դիմել կամ յիշեալ տեղերը, կամ ուղղակի հեղինակին հետեւալ հասցեով:
ТИФЛИСЪ. Редакція „Мшакъ“. РАФФИ.

Յանձնուեցաւ մամուլին մեր
„ՀԱՅՈՑ ԼԵՋՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ“ ԵՐԿՐՈՐԴ
ՏԱՐՈՒՄՑ ԴԱՍԱԳԻՐՔԸ
ԵՒ լոյս կը տեսնի մինչև ամսիս վերջը:
Յ. Նազարեանց

ԹԻՖԼԻՍԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ
սիստեմատիքական ընթացք
Գրիգորի վարձելեան
Հայոց միջնակարգ ուսումնարանների համար մասն առաջին (ամբողջ թուեր)
Մամուլի տալին է և սեպտեմբերի առաջին օրերին լոյս կը տեսնի նոյն խնդիրների երկրորդ մասը (կոտորակ թուեր և երրորդական կանոններ):
Գինն է 40 կոպ.
Ուսումնարաններին զիջում 20%:
Ծախվում է Վ. Շահվերդեանի լրագրական գործակալութեան խանութում:
Օտար տեղերից դիմում են այս հասցեով:
ТИФЛИСЪ, въ Агентство В. Шавердова:

ԴՊԿՏՈՐ Ա. ԲԱՐԱՑԵԱՆԸ
Միայն ամսոյս 15-ից կարող է հիւանդներ ընդունել, առաւօտները ժամը 9—11, իւր նախկին բնակարանում: Սոլոլակ, Սերգիևսկի փողոց, Բայինդուրովի տանը:
4—10

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի
„ՀԱՅՈՑ ԼԵՋՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ“
ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒՄՑ
ԴԱՍԱԳԻՐՔԸ
Կովկասեան գրախանութի հրատարակութեամբ և ծախվում է նոյն գրախանութում:
Գինը 25 կոպէկ է: Գումարով առնող և ԿԱՆԻԿ վճարողին 20% զիջում կը լինի: — Կարելի է դիմել:
ТИФЛИСЪ. — Кавказская книжная торговля.— З. П. Грикурову կամ
ТИФЛИСЪ.— На Авлабарѣ.— Ованнесу Назарьянцъ.
Յ. Նազարեանց.
4—4

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԷԿԻՑ

ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ

L'ORIENTAL

ՅՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՍ:

„Ժուրնալ դ'Օրիան“ լրագրի հին բաժանորդներին դադարեցրած թերթի տեղ կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը:

„L'Oriental“ թերթի տարեկան գինը 8 ռուբլ է, կէս տարվանը 4 ռուբլ:

Գրվել կարելի է „ՄԵԱԿԻ“ խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիեննայում դիմելով հետեւալ հաստրակ հասցեով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

Միջին փողոց, Կաթօլիկէսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէյ ուրիշ տեղ ծախվում են. **ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵՐԵԼ** ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱՐՆԵՐ 8—30 ռ., չափազանց 250—25 ռ., սակվոյթներ 1. 30—12 ռ., սոււն դուկն եր ճանապարհի 6—35 ռ., մարաններ (поребцы) 6—25 ռ., սա մօ վարներ 60 կ.—1.25 ֆունտը, կուլածնի պղնձ ամաններ, Գերմանիայի երկաթէ էմալով ամաններ, ու մի վալինի կնէր մրամօրնի 38 ռ.—75 ռ., հրացաններ երկու լույսին 6—32 ռ., ռեվոլվերներ ամենայն տեսակ 3. 50—30 ռ., պատրոններ (գուլաններ) ռեվոլվերի, սիգար Բէնդարդի ֆաբրիկից, պապիրոս և թամբաքու Կուշնարովի գրիլի պապիրոզի. 5,000 ֆունտ թէյ (չայ) եղ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկիտ. (սուլար չայու և կաֆէի) Էլնէմի. Կոֆէ Էլնէմի և Միլեյսնի. Պետերբուրգում 40—1 ռ. 25 կ. հայկերներ ամենայն տեսակ 28 կ.—240 ռ., պրոբկայ գինեվաճառների, հանրային և գարեջրի (для сельтерскихъ водъ и пива) ղոյթով (пучъ), պարտաներ սամուլարի և չայու, դանակ շանգալ զանազան ֆաբրիկաների 1 ռ. 20 կ.—25 ռ. դուժինը. գրչակներ 1 ռ. 80 կ.—5—60 կ. դանակ ջրի 1—60 կ.—12 ռ., դանակ հացի 20 կ.—1 ռ., հատը, կուլածնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբոր. միս կարելու մաշկայ. Անգլիական ութներ, բրիտանիկ չայնիներ, կաֆէի-նիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրակավալ կարթիկ 18 կ., վաքս ֆրանսիայի ծաղի, թուղթ փողաի, կանկերտներ, սուրճուչ, մատիտ, զրիչ երկաթէ, զրչակոթ, քարտախոտի, թանաք, թանաքամաններ, պրեսպապիլներ, գրախներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանիկ դուժինը 1—50 կ. մինչև 12 ռ., և չայու 45 կ.—5 ռ., չուլմիչէ 45 կ.—5 ռ., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ռ. ջուխտ, պողսապոլաններ վարշավու, Բեքլի ԿԱԼՕՆԵՐ, ամեն տեսակ, գուլաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շայկներ, մարդկերանց դալուստիկներ, գնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, սնձրեկ և շոքի. սանդղեր ջրմայու ոսկրէ, գուտապրիլովի և փայտէ, շոտկաններ գլխի, շորի, սապոնի, պոլի և կարտի համար. չուլքի թէյ (бумага) մատիկ Կօժի և շալէ (гарусъ) ֆէլչատիէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիտաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլաններէնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.—30 կ., կտոր, հոտավաճ ջրեր, պուրա, Կիցերին ջրի քաղաի, հոտավաճ պարաշոկներ Կիլերի ԼԱՐՈՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերցնելու ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս զանվում են ՄԻՔԱՅԷԼ ՏԵՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում. (ԵՄ ՏԿԼԱԴԻ) միջի փողոցում կաթովկայ փողոցի անկիւնում № 13.

Օտարադարձացիք կարող են դիմել հետեւալ հասցեով. ТИФЛИСЪ Ми-хаилу Н. Теръ-Никогосову.

136—180

Միջին փողոց, Կաթօլիկէսկայա փողոցի անկիւն № 13.